



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«06» հունիսի 2018թ.

№ 242.ՉԽ.

ՀՐԱՄԱՆ

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ ՀՀ ֆինանսների նախարարի 16.02.2018թ. թիվ 55-Ա, 27.02.2018թ. թիվ 67-Ա և 27.02.2018թ. թիվ 117-Ա հրամանների համաձայն Ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում 27.04.2018թ. կազմված թիվ 1 ակտում (այսուհետ՝ Ակտ) արձանագրված խախտումների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի.

1. ՀՀ ֆինանսների նախարարի 16.02.2018թ. թիվ 55-Ա, 27.02.2018թ. թիվ 67-Ա և 27.02.2018թ. թիվ 117-Ա հրամանների հիման վրա Նախարարության կողմից Ընկերությունում իրականացվել է ստուգում (այսուհետ՝ Ստուգում):

2. Ստուգման արդյունքում կազմված Ակտի համաձայն՝ Ընկերությունը 6 դեպքերով խախտել է «Առողիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետի պահանջը, այն է՝ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով չի վարել իր կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյանը, ինչպես նաև Ընկերությունը 9 դեպքերով խախտել է «Առողիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությամբ սահմանված պահանջը, այն է՝ Ընկերության

կողմից աուդիտի և հարակից ծառայությունների իրականացումը չի փաստաթղթավորվել աուդիտ իրականացնող անձի կողմից՝ աուդիտի ստանդարտներով սահմանված կարգով:

3. Ընկերության նկատմամբ Նախարարությունում 03.05.2018թ. թիվ 24-2/7950-18 գրությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում 30.05.2018թ. հրավիրվել են վարչական լսումներ (այսուհետ՝ Լսումներ), որի արդյունքում կազմվել է թիվ 1 արձանագրությունը:

4. Լսումների ընթացքում Ընկերության ներկայացուցիչ Ալբերտ Ասատրյանը ներկայացրել է Ընկերության 30.05.2018թ. դիմումը, որով Ընկերությունը հայտնել է, որ վերագնահատելով Նախարարության կողմից իրականացված ստուգումների արդյունքում 27.04.2018թ. կայացված Ակտի իրավաչափությունը ընդունում է ստուգման ակտում նշված փաստական հանգամանքները, դրանով պայմանավորված հրաժարվում է 14.05.2018թ. ներկայացված առարկություններից (մտից՝ թիվ 22727 գրություն), ընդունում է ստուգման ակտով արձանագրված խախտումները և որպես պատասխանատվության միջոց առաջարկվող տուգանքի չափը ամբողջությամբ:

5. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31³-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» և «է» կետերի համաձայն՝ տուգանքը որպես պատասխանատվության միջոց կիրառվում է, եթե աուդիտ իրականացնող անձը խախտել է օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետով սահմանված պահանջը՝ յուրաքանչյուր չգրանցած պայմանագրի համար 400,000 դրամի չափով, յուրաքանչյուր այլ տեսակի խախտման համար՝ 200,000 դրամի չափով, խախտել է օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, սակայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, կատարված խախտումը լիազորված մարմնի կողմից գնահատվել է ոչ էական՝ չի ազդել աուդիտորական եզրակացության ձևի և բովանդակության վրա՝ 200,000 դրամի չափով:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստերն ու իրավական հիմնավորումները և ղեկավարվելով «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31³-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» և «է» կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝

[illegible]

- 

ԱՏՈՄ ԶԱՆԶՈՒԴԱԶՅԱՆ